

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
BIBLIOGRAPHY
БИБЛИОГРАФИЯ

<https://doi.org/10.52027/18294685-ba.2.25-04>

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Հայաստանի ազգային գրադարան

ՀԱՅ ԸՆԹԱՑԻԿ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, պարտադիր օրինակ, գրապալատ, հայ տպագրության տարեգիրք, մատենագիտություն:

Keywords: National Library of Armenia, deposit law, book chamber, Armenian printed publications, bibliography.

2025 թվականին լրանում է Հայաստանի Հանրապետության պետական կամ հաշվառման-գրանցային մատենագիտության օրգան՝ «Հայ տպագրության տարեգիրք» շարունակվող հրատարակության լույս ընծայման 100-ամյակը:

Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող հրատարակությունների հաշվառման, մատենագիտական գրանցման և պահպանման հիմքերն ստեղծվել են քսան տարի առաջ 2005 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» օրենքի ընդունումով⁹: Համաձայն դրա ՀՀ-ում լույս տեսնող տպագիր հրատարակություններից երկուական օրինակ մուտք էին գործում Հայաստանի ազգային գրադարան և Ազգային գրապալատ: Հետագայում 2017 թ. գրապալատի լուծարումից հետո պարտադիր օրինակի հատկացման, պահպանության, հաշվառման և օգտագործման հետ կապված բոլոր հարաբերությունները դրվել են Հայաստանի ազգային գրադարանի վրա:

Փաստաթղթերի պարտադիր ավանդադրումը ազգային մատենագիտության հիմքն է, քանի որ այն նախատեսված է երկրում ստեղծված բոլոր փաստաթղթերը, ինչպիսիք են գրքերը, տեսալսողական արտադրանքը և էլեկտրոնային հրատարակությունները, հնարավորինս լիարժեք հավաքելու և պահպանելու համար: Պարտադիր օրինակները ծառայում են ազգային մատենագիտական ցանկերի և գրադարանային գրացուցակների ստեղծմանը՝ ազգի մշակութային նվաճումների համապարփակ գրանցում և արտացոլում ապահովելով:

⁹ Տե՛ս «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողով, 4 հոկտեմբերի, 2005:

Աշխարհում տպագիր արտադրանքի պարտադիր ավանդադրումը երկրում լույս տեսնող գրքերի գրանցման և պահպանման նպատակով սկիզբ է առել Ֆրանսիայում¹⁰:

Ֆրանսիան ունի ամենահին՝ 1537 թ. ընդունված օրենքը, որով Ֆրանսուա Առաջինը սահմանեց, որ Ֆրանսիայում հրատարակված յուրաքանչյուր գրքից մեկ օրինակ պետք է պահվի Թագավորական գրադարանում՝ թագավորի թույլտվությունը ստանալու համար: Օրենքը արձանագրում էր նաև, որ այդ գրքերը ազգի գրավոր հիշողությունը հետագա սերունդների համար պահպանելու նպատակ ունեն: Անգլիայում պարտադիր օրինակի համակարգը սկսվել է 1662 թ. «Մամուլի լիցենզավորման մասին» օրենքով, որը նախատեսում էր, որ գրքերը պետք է հանձնվեին Թագավորական գրադարանին, ինչպես նաև Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների գրադարաններին: Ավստրիայում, Հաբսբուրգյան միապետությունում գրքերի ավանդադրման մասին օրենքն ընդունվել է 1579 թվականին՝ կայսր Ռուդոլֆ II-ի կողմից, որի կատարմանը հետևում էր նրա նշանավոր գիտնական գրադարանավար Հյուգո Բլոտիուսը:

Հետաքրքիր է, որ «ազգային գրադարան» հասկացությունը չի օգտագործվել մինչև 19-րդ դարի կեսերը: Նախքան այդ ժամանակակիցները խոսում էին «Թագավորական գրադարանի» մասին: (Նիդերլանդներում, Բելգիայում, Դանիայում և Շվեդիայում ազգային գրադարանն այսօր էլ Թագավորական գրադարան են կոչում):

Ռուսաստանում պարտադիր օրինակի ծնունդը սկիզբ է առնում Եկատերինա Երկրորդ թագուհու գահակալության տարիներին: 1783 թ. փետրվարի 23-ին Եկատերինա Երկրորդի հրամանով բոլոր պետական և մասնավոր տպարանները պարտավոր էին յուրաքանչյուր հրատարակությունից մեկ օրինակ հատկացնել Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի կայսերական գրադարանին:

Անվիճելի փաստ է, որ պարտադիր օրինակի վրա հիմնված տպագիր արտադրանքի հաշվառումը երկրում լույս տեսնող գրականության մասին կայուն և վստահելի տեղեկատվություն է ապահովում:

Գոյություն ունի գրականության հաշվառման և գրանցման նաև մեկ այլ տարբերակ, որը խարսխվում է տվյալ հրատարակության հեղինակային իրավունքի ամրագրման և պաշտպանության հիմքի վրա: Որոշ երկրներում պարտադիր օրինակի հասկացություն և հրատարակչին պարտավորեցնող օրենք չկա, որը նրան կստիպի գրքերը ազգային գրադարանին հանձնել: Փոխարենը այդ երկրներում կիրառվում է հեղինակային իրավունքի գրանցման ինստիտուտը: Հեղինակը կամ հրատարակիչը պարտավոր են իրենց տպագրած հրատարակությունները հանձնել պատկան մարմնին, որը ստանձնում է նրանց հեղինակային իրավունքի պաշտպանությունը:

Օրինակ, ԱՄՆ-ում հրատարակիչները նոր լույս տեսնող հրատարակություններից երկու ամբողջական լավագույն օրինակ լույս ընծայումից հետո երեք ամսվա ընթացքում պարտավոր են հանձնել Կոնգրեսի գրադարանի Հեղինակային իրավունքի գրասենյակին:

¹⁰ Տե՛ս Հայրապետյան Ն. Վ., Ազգային գրադարան (պատմահամեմատական վերլուծության փորձ) // Լրաբեր հասարակական գիտությունների, 2003, №1, էջ 182-188:

Աշխարհում շատ ժողովուրդներ կան, որոնք պատմական հանգամանքների բերումով գրականություն են տպագրում իրենց երկրների աշխարհագրական սահմաններից դուրս: Ուստի հնարավոր չէ այդ գրականության ամբողջական հաշվառումը և գրանցումը: Այդ բացը հնարավոր է լրացնել միայն տարբեր երկրների ազգային մատենագիտական ծառայությունների համագործակցության և տեղեկատվության փոխանակության միջոցով: Այսինքն, մենք տեղեկություն ենք փոխանցում վրացիներին և ռուսներին Հայաստանում լույս տեսած վրացերեն և ռուսերեն գրականության մասին, փոխարենը նրանք մեզ են տրամադրում Վրաստանում և Ռուսաստանում հայերեն լույս տեսած գրականության մասին տվյալները:

Ճիշտ մեկ դար առաջ նորաստեղծ Հայաստանի պետական գրապալատը թողարկեց «Հայ տպագրության տարեգիր» մատենագիտական ցանկի առաջին համարը: Ինչպես հարյուր տարի առաջ, ցանկի նպատակն է հաշվառել և գրանցել Հայաստանի տարածքում լույս տեսնող բոլոր տիպի և տեսակի հրատարակությունները (գրքեր, լրագրեր, ամսագրեր, նոտային, կերպարվեստի և գրաֆիկական հրատարակություններ), ինչպես նաև պարբերական մամուլի էջերում լույս տեսնող հոդվածների, գրախոսությունների, դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտական նկարագրությունները:

Ընթացիկ մատենագիտության հիմքը դրվել էր դեռևս 1922 թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «ՀԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի բիրլոգրաֆիական գործը Լուսժողկոմատին հանձնելու մասին դեկրետով»: Համաձայն դեկրետի 2-րդ կետի լուսժողկոմատի վրա պարտականություն էր դրվում «ցուցակագրել հանրապետության սահմաններում լույս տեսնող մամուլի բոլոր արտադրությունները և հրատարակել դրանց ցուցակները» [Ղազարյան, 2004, 103]:

«Հայ տպագրության տարեգիր»-ը տարբեր ժամանակներում տարբեր խորագրերով և հաճախականությամբ է լույս տեսել (մինչև 1971 թ. որոշակի պարբերականությամբ տպագրվել է «Գրքի տարեգիր» խորագրով): 1995 թվականից այն տպագրվում է «Հայ տպագրության տարեգիր» խորագրով (ռուսերեն՝ *Летопись армянской печати: Библиографический указатель*, անգլերեն՝ *Armenian Printed Publications: Bibliographic list*): Ամսագրային հոդվածների հաշվառումը կատարվում է 1939 թվականից, իսկ լրագրային հոդվածներինը՝ 1949 թվականից:

Գրքերի մատենագիտական նկարագրության մեջ նշվում է հեղինակի ազգանունը և անունը, վերնագիրը, ենթավերնագիրը, հրատարակչական տվյալները, քանակական տվյալները, վերնախորագիրը, գրքի չափսը և գրքի միջազգային ստանդարտ համարը՝ ISBN-ը:

Օրինակ՝ **Մաճկալյան Ս.** Գութան չեղներ, աշխարհն ի՞նչ էր: [Վիպակ] / Մամվել Մաճկալյան; [Խմբ.՝ Ա. Ղազինյան]. – Եր.: Հեղ. հրատ., 2025. – 116 էջ: նկ., լուսանկ.: 20 սմ. – ISBN 978-9939-0-5105-5:

Խորհրդային տարիներին տպագրության տարեգրում 1968 թվականից գետեղվում էր «Սովետական Հայաստանը ՍՍՀՄ և արտասահմանյան սոցիալիստական երկրների մամուլում» մատենագիտական ցանկը: ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների

քաղաքական համակարգի փլուզումից հետո այդ ցանկը մի քանի տարի (1995-2000 թթ.) լույս է տեսել «Հայաստանը աշխարհի մամուլում» խորագրով: Այն հիմնականում մատենագրում էր Հայաստանի և հայերի մասին Ռուսաստանի Դաշնության մամուլում լույս տեսնող նյութերը: Ցանկը լույս է տեսել «Սովետական Հայաստանը ՄՍՀՄ և արտասահմանյան սոցիալիստական երկրների մամուլում» տարեգրքի փոխարեն: Տարեգրքի հրատարակման նպատակը հավանաբար եղել է Հայաստանի և Արցախի շուրջ ռուսական մամուլի հրապարակումների մատենագրումը: 2001 թվականից այն լույս չի տեսել, փոխարենը ավելի կարևորվել է «Սփյուռքահայ մամուլի տարեգրքի» հրատարակումը: Ժամանակին սփյուռքի մամուլի տարեգրքում մատենագրվել են ավելի քան 15 անուն պարբերականներ: Իսկ ներկայում «Սփյուռքահայ մամուլի տարեգրքում» ընդգրկվում է միայն Բեյրութի «Ազդակ» և «Արարատ» թերթերի, Կահիրեի «Ջահակիր», Բոստոնի «Պայքար» և Վրաստանի «Թբիլիսի» լրագրերի բովանդակությունը:

Մինչև 1988 թվականը «Տպագրության տարեգրի» յուրաքանչյուր տարվա առաջին համարում զետեղվել է «Պարբերական և շարունակվող հրատարակություններ» մատենագիտական ցանկը (ամենամյա, լույս է տեսել 1968-1988 թթ.): Այն ընդգրկում էր հանրապետությունում նախորդ տարում լույս տեսած բոլոր տիպի թերթերի (հանրապետական, շրջանային, գերատեսչական, արդյունաբերական ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, կոլտնտեսային), ամսագրերի, գիտական մատենաշարային աշխատությունների, ժողովածուների, տեղեկաթերթերի (բյուլետեն) մատենագիտական նկարագրությունները:

Բոլոր տարեգրքերն ունեն անվանացանկ և աշխարհագրական անունների ցանկեր, որոնք դյուրացնում են դրանցից օգտվելը: Հաշվի առնելով պարբերական մամուլում ժամանակակից և դասական ուղղագրության զուգահեռ գործածման հանգամանքը՝ մատենագիտական նկարագրություններում հեղինակը, նյութի խորագիրը և հրատարակման տվյալները գրվում են բնագրի ուղղագրությամբ, իսկ նյութի բովանդակության ծանոթագրումը՝ ժամանակակից ուղղագրությամբ:

«Հայ տպագրության տարեգիրքը» ներկայում ընդգրկում է գրքի, լրագրային հոդվածների, ամսագրային հոդվածների, սփյուռքի մամուլի, գրախոսությունների և ատենախոսությունների սեղմագրերի տարեգրքերը: «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը» լույս է տեսնում տարին երկու անգամ՝ տարեգրքի 6-րդ և 12-րդ համարներում: Գրախոսությունների տարեգիրքը լույս է տեսնում տարեկան մեկ անգամ՝ տարեվերջյան 12-րդ համարում: Մնացած բոլոր տարեգրքերը, որոնց թվում նոր լույս տեսած գրքերի և պարբերական մամուլի հոդվածների վերլուծական մատենագիտության ցանկերը լույս են տեսնում ամեն ամիս՝ մեկ միացյալ թողարկումով:

«Լրագրային հոդվածների տարեգրքում» մատենագրվում է Հայաստանում լույս տեսնող մոտ 20 անուն լրագրերի բովանդակությունը, այդ թվում՝ «Ազգ», «Առավոտ», «Գրական թերթ», «Հրապարակ», «Голос Армении» և այլն: Բերենք լրագրային հոդվածի նկարագրության մի նմուշ.

Խաչատրյան Մարիետա: Պարականոն տարի է սպասվում: [ՀՀ ներքաղ. կյանքի մասին] / Մարիետա Խաչատրյան // Ազգ. – 2025. – 17-23 հունվ. – էջ 1-3:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում ընթացիկ ազգային մատենագիտության պաշտոնական հրատարակությունը կոչվում է «Հայ տպագրության տարեգիրք», ռուսերեն՝ «Летопись армянской печати», անգլերեն՝ «Armenian Printed Publications»:

Ռուսաստանում ընթացիկ մատենագիտության ցանկը կոչվում է «Книжная летопись» (անգլերեն՝ “The Book Index”), Բելոռուսում՝ «Letapis druku Belarusi» (անգլերեն՝ “Chronicle of Belarusian Print”), Լեհաստանում՝ «Przewodnik Bibliograficzny» (անգլերեն՝ “Bibliographic Guide”), Թուրքիայում՝ «Türkiye Bibliyografyası» (անգլերեն՝ “Turkish Bibliography”): Ինչպես երևում է հրատարակությունների խորագրերից, դրանք ավելի հաճախ արտացոլում են ոչ թե մատենագիտության բովանդակությունը, այլ՝ դրանց հատկացվածությունը, թե ինչ խնդիր են դրանք լուծում: Բնականաբար, այն երկրի տպագրության տարեգրությունն է, ժամանակագրությունը, որը տպագիր արտադրանքի ցանկ և ուղեցույց է ծառայում:

2025 թվականի հունվարից «Հայ տպագրության տարեգրքում» մատենագիտական գրանցումները խմբավորվում են համաձայն Համընդհանուր տասնորդական դասակարգման աղյուսակի բաժինների:

«Հայ տպագրության տարեգրքի» ամբողջականությունը և համապարփակությունը կախված է Հայաստանի ազգային գրադարանում ներհայաստանյան և սփյուռքում լույս տեսած գրականության և պարբերական հրատարակությունների ժամանակին և լրիվ ստացումից: Մատենագիտական նկարագրության կանոններից ամենաառաջնայինը նյութերի նկարագրության «**de visu**» սկզբունքն է (լատ.՝ աչքով տեսածը): Մատենագետը պետք է տեսնի և իր տեսածը նկարագրի, այլապես մատենագիտական գրանցումները կասկածելի հավաստիություն և ճշգրտություն են ունենում: Թվային տեխնոլոգիաների ներկա ժամանակաշրջանում հնարավոր է նյութերը շատ արագ մատենագրել դրանց համացանցային աղբյուրների միջոցով: Սակայն այդ մեթոդը հավաստիության երաշխիքներ չի ապահովում: Մանավանդ արհեստական բանականության միջոցով գեներացվող հրատարակությունների ներկա աճի պայմաններում:

«Հայ տպագրության տարեգիրք» մատենագիտական ցանկերի բոլոր համարները ներկայացված են www.nla.am կայքում՝ 1925–1993 թթ.՝ <https://is.gd/eqvT2n> և 1994–2025 թթ.՝ <https://is.gd/E64dkh>:

Տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների պարտադիր ավանդադրումը, դրանց վերաբերյալ ազգային օրենսդրությունների մշտական թարմացումը կարևոր է համընդհանուր մատենագիտական հաշվառման տեսակետից: 2020 թ. նոյեմբերին ԻՖԼԱ-ն հրապարակել է պարտադիր ավանդադրման օրենքների վերաբերյալ իր ստուգաթերթիկը¹¹, որի նպատակն է օգնել գործող օրենքները վերլուծողներին կամ նորերը նախագծողներին: Այն նախատեսված է ապահովելու, որ հիմնական հարցերը ներառվեն գրադարանների և դրանց օգտագործողների համար օրենսդրության այս կարևոր ոլորտի վերաբերյալ քննարկումներում:

¹¹ Տե՛ս <https://www.ifla.org/news/ifla-releases-checklist-for-legal-deposit-laws/>

Ստուգաթերթիկը հիմնված է ԻՖԼԱ-ի պարտադիր ավանդադրման վերաբերյալ հայտարարության¹² (2011) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի պարտադիր ավանդադրման օրենսդրության ուղեցույցների¹³ (2000) մեջ բարձրացված հարցերի, ինչպես նաև ԻՖԼԱ-ի Ազգային գրադարանների մշտական հանձնաժողովի, Հեղինակային իրավունքի և այլ իրավական հարցերի խորհրդատվական կոմիտեների մեկնաբանությունների վրա:

Թղթային տպագիր հրատարակությունների նկատմամբ թվային տեղեկատվության գերիշխող աճի ժամանակակից պայմաններում, թվային բովանդակության հավաքումը և պահպանումը անհետաձգելի խնդիր է դարձել: Շատ երկրներում արդեն այդ խնդիրը օրենսդրական կարգավորում է ստացել: Որպես առաջին քայլ հարկավոր է սկսել գրքերի հրատարակչական էլեկտրոնային պատճենների պահպանումը:

«Հայ տպագրության տարեգրքի» 1994-2025 թթ. համարները հասանելի են «Հայ մամուլ» շտեմարանում¹⁴:

SUMMARY

The article details the National Library of Armenia's bibliographic lists, including “Armenian Printed Publications,” “Periodicals and Serials,” “Index of the Armenian Diaspora,” and others. It also discusses the development of modern printed bibliography in the Republic of Armenia and the background of the legal deposit system for publications across the globe. The article honors the 100th anniversary of “Armenian Printed Publications,” a serial publication.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղազարյան Ռ., Կարևորագույն որոշման մերօրյա հրատապությունը // Հայկական գրադարան տարեգիրք, 2004, № 8, Երևան, էջ 103-106:

¹² Տե՛ս <https://www.ifla.org/publications/ifla-statement-on-legal-deposit-2011/>

¹³ Տե՛ս <https://repository.ifla.org/items/c81902ba-b96d-48fd-acf4-a5afe5b73f7a>

¹⁴ Տե՛ս <https://tert.nla.am/mamul/Haytpagrtaregirq/Table.html>